

DS
186
A52

A
A
0
0
0
8
2
8
6
8
7
4



UC SOUTHERN REGIONAL LIBRARY FACILITY

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ԳՐԵՑ

Մ. Յ. ԱՆԱՆԻԿԵԱՆ



1918

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԿՈԶՆԱԿ»

ՆԻԻ ԵՈՐՔ



**ՎԱՐԴԱՆԱՆՑ
ՊԱՏԵՐԱԶՄԸ**

ԳՐԵՑ

Մ. Յ. ԱՆԱՆԻԿԵԱՆ



1918

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԿՈԶՆԱԿ»Ի

ՆԻՒ ԵՈՐՔ

DR. K.M. KHANTAMOUR
ARMENIAN COLLECTION



University of California Library , Los Angeles



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐԴԱՆԱՆՑ
ՊԱՏԵՐԱԶՄԸ

ԳՐԵՑ

Մ. Յ. ԱՆԱՆԻԿՅԱՆ

ԱՎ. ԱՆԱՆԻԿՅԱՆ



1918

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԿՈՉՆԱԿ»Ի

ՆԻԻ ԵՈՐՔ

ՆԱԽԱԲԱՆ

ԿՈԶՆԱԿԻ Խմբագրութեան առաջարկով՝
ահա իրրեւ գրֆոյկ մը լոյս կը տեսնէ «Վարդա-
նանց Պատերազմը» որ ԿՈԶՆԱԿԻ մէջ հրատա-
րակուեցաւ: Այս առթիւ հեղինակը ըրած է
պէտք եղած սրբագրութիւնները եւ կարգ մը յա-
ւելումներ:

Մեր ազգային պատմութեան այս կարեւոր
երջանը՝ թէպէտ յանախ պատմուած՝ պէտք ու-
նէր նոր ֆննութեան մը՝ Գարագաշեանի բացա-
սական եզրակացութիւններէն վերջ:

Մեծանուն հեղինակին իր Քննական Պատ-
մութեան մէջ Վարդանանց մասին գրածը կար-
դալով՝ նոր ֆննասէր մը կը զարմանայ թէ ինչ-
պէս գիտնական մը կրնայ զիջանիլ անանկ կըռ-
ուազան տախակութիւններու, անանկ փցուն եւ
երկդիմի մանրամասնութիւններու ինչպէս ը-
րած է Գարագաշեան՝ որուն կանխակալ թէզը
կը կայանայ վասակի ազգասէր և հրաւալի խո-
հեմութիւնը պաշտպանելու մէջ: Առանց մտա-
ծելու որ՝ եթէ վասակի ֆաղափականութիւնը
այնքան իմաստուն եւ ազգաշէն բան մը ըլլար՝
այն ալ կ'ունենար իր ջատագով պատմագրողը՝
Գարագաշեան ցաւ ի սիրտ կը դառնայ անոր կող-
մը ներկայացնող տոֆիւմաններու բացակայու-
թեան վրայ: Արդար վասակի կուսակցու-

թեան կարեւոր եւ գրագէտ եկեղեցականներէ
զուրկ մնացած ըլլալը ինքնին դատապարտու-
թիւն մըն է ծերունի մարգպանին նկարագրին
եւ իմաստութեան համար :

Վարդանանց պատերազմին մասին ունինք
երկու կարեւոր աղբիւրներ, Եղիշէ եւ Ղազար
Փարպեցին : Ասոնցմէ առաջինն է որուն վրայ
հիմնուած են վարդանանց պատերազմին մա-
սին գրուած գրեթէ բոլոր գլուխները առանց
բացառելու Զագմագնեանի շահեկան նոր փոր-
ձը (Հայոց Պատմութիւն) : Երկու հեղինակնե-
րուն միջեւ ժամանակի տարբերութիւնը քիչ է
եւ երկուքն ալ վստահելի եւ անկախ աղբիւրնե-
րէ քաղած են իրենց տուիքը : Եղիշէ աւելի գու-
նագեղ մանրամասնութիւններ ունի, բայց իր
պատմուածքը քիչ մը թոյլ է, մինչ Փարպեցին
ինչպէս արդէն նկատած է Գարագաշեան՝ կը
փայլի դէպքերու կուռ եւ լուսաւոր կապակցու-
թեամբ : Եւ որովհետեւ երկուքն ալ էական կէ-
տերու վրայ միշտ համաձայն են եւ մանրամաս
նութեան մէջ յանախ գիրար կ'ամբողջացնեն՝ ար-
դի պատմագրին կը մնար շարել Եղիշէին հայ-
թայթած նիւթը Ղազարի տուած ամուր թելին
վրայ :

Մեր Ամերիկահայ եղբայրներուն կը մա-
տուցանենք մեր անցեալին այս դրուագը իբրեւ
սփոփանք եւ իբրեւ հրահանգ մը այս նոր
նգնածամին մէջ՝ երբ հին աղէտին արիւնոտ
դաշտերուն վրայ կը շարժի սպառնագին ըստ-
ուերը նոր վտանգներու : Եթէ վարդանանց շար-

Ժոււրը մեր ժամանակներուն համար վաւերա-
կան դաս մը ունի կրնանք թերեւս անոր տալ
սա հակիրճ արտայայտութիւնը: Օտար լուծի
մը տակ չարչարուող տկար, անօգնական ցեղի
մը համար հաւանօրէն անխոհեմութիւն է ա-
մէն բան վտանգել քաղաքական յախուռն եւ ան
խոստմնալից բաղդախաղի մը մէջ: Ազատութիւ-
նը շատ թանկագին է, բայց իր օրուան սպասող
առողջ ցեղի մը համար՝ գոյութիւնը աւելի թան-
կագին է: Ամէն պարագայի մէջ՝ առանկ կէտի
մը վրայ՝ որոշումը կը պատկանի *մեծամաս-
նութեան* :

Սակայն երբ ազգ մը ինքզինքը բարոյապէս
կամ ֆիզիքապէս կը գտնէ անտարակուսելի,
անողոք, անդառնալի մահավնիռի մը առջեւ՝
մանաւանդ երբ այդ վնիռը արդէն կը գործա-
դրուի միւսողային շնականութեամբ մը՝ այն ա-
տեն անոր նամբան որոշ է: Անիկա խոհեմ, մի-
արան, գոհարեր ինքնապաշտպանութեան1 մի-
գով մը միայն կը փրկէ կամ կուտայ ինչ որ բռն
նութեամբ, անիրաւարար կը պահանջուի իր-
մէն:

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ա. ՊԱՐՄԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Վարդանանց ճգնաժամը պատահեցաւ Պարսից Յազկերտ Բ.ի օրով (որ թագաւորեց 439—456) : Իր թագաւորութեան սկիզբէն պատերազմ յայտարարեց Յունաց վրայ որոնք, սակայն, անկարող անոր հետ չարհուելու՝ խաղաղութիւն կնքեցին՝ տարեկան հարկ մը վճարելով եւ իրենց կողմը ապաստանած պարսկահապատակ Քրիստոնեաները կրկին հեթանոսներուն ձեռքը յանձնելով (444) : Հայերը բան մը չէին վրնար ակնկալել Պոլիսէն, ուր Թէոդոս Բ.ի պէս արպիւար իշխան մը կը կրէր կայսերական թագը եւ ուր իսկական իշխանութիւնը կը գտնուէր կնոջ* մը ձեռքը՝ մանաւանդ անանկ ատեն մը երբ Ատիլլայի Հոները՝ Եւրոպան տակնուվրայ կ'ընէին եւ Պոլսոյ կը սպառնային :

Սասանեան Շահերը քրիստոնէութեան եւ հրէութեան հանդէպ՝ երբեմն ներողամիտ կեց-

Պուլֆերիա (408—457) : Այս տարիներուն մէջ կ'իյնայ Հայկական գրականութեան սկիզբները եւ Վարդանանց ապստամբութիւնը :

ուածք մը բունած էին՝ բայց աւելի յաճախ կը հարստահարէին եւ կը հալածէին զայն թէ կըրօնական եւ թէ պետական տեսակէտէ: Քրիստոնէութիւնը՝ մանաւանդ Կաթողիկէ եկեղեցւոյ հետ հաղորդակցող Քրիստոնէութիւնը իրենց ատելի էր՝ քանի որ անիկա կապ մըն էր իրենց արեւմտեան հպատակներուն եւ Յունաց միջեւ եւ արգելք մը՝ պետութեան տարրերը իրարու հետ լուծելու:

Յազկերտ Բ. ի թագաւորութեան երկու աշառու գործերն են՝ հալածանքը Քրիստոնեաներուն եւ Հրէից դէմ եւ անվերջ պատերազմները Պարսկաստանի արեւելեան սահմաններուն վրայ բնակող ճերմակ Հոներուն եւ Սիթաղացիներուն դէմ: Բայց իր ջանքերը ձախողութեամբ պսակուեցան երկուքին մէջ ալ եւ թերեւս կրնանք ըսել որ գոնէ այս անգամ բարբարոս թուրքերը անգլիտակցօրէն օգնեցին Քրիստոնեաներուն՝ Յազկերտի արեւտալի ծրագրին գործադրութիւնը դժուարացնելով:

Վարդանանց պատերազմին եւ անկէ վերջ Հայաստանի մէջ շարունակուող կրքոտ, արցունքոտ, արիւնոտ վրդովումներուն բուն նշանակութիւնը հասկնալու համար՝ անհրաժեշտ է աչքի առջեւ ունենալ Սասանեան տէրութեան քաջածանօթ կրօնաքաղաքական ձգտումները: Անոնց արքունիքին վրայ մոգերը կը բանեցընէին տիրապետող ազդեցութիւն մը որ շատ անգամ փնջղինքը հրով եւ սրով կ'արտայայտէր ընդդէմ այլակրօն հպատակներուն:

Տխրորոնի մէջ դարբնուող եւ միշտ պատեհ
առիթի սպասող փրոփակահանտի այս յամառ քա-
ղաքականութիւնը ճշմարիտ փորձաքարն է
Վարդանի եւ Վասակի նկարագրին ու ընթաց-
քին :

Բ. ՆԱԽԱՐԱՐԱՑ ՈՒՐԱՑՈՒԹԻՒՆԸ

Հիմա՝ մեր երկու իրազեկ աղբիւրներուն
հետեւելով՝ ուրուագծենք Յ.րդ. դարու մեր
պատմութիւնը լեցնող տխուր դէպքերուն առա-
ջին փուլը : Ըստ Եղիշէի՝ հարածանքը Հայաս-
տանի մէջ սկսաւ՝ իբրեւ ընդհանուր հարածան-
քի մը մէկ մասը եւ Դենշասարուհի դարուստով :
Շահին այս վերակացուն աշխարհագրութիւն
ընելու պատրուակով՝ եկեղեցիները, եկեղեցա-
կանները եւ մինչեւ յիսկ վանականները տուրքի
տակ դրաւ, հասարակ ժողովուրդին հարկերը
ծանրացուց, նախարարները իրար ձգեց եւ Հա-
յոց հազարապետը (Վահան Ամատունի⁶) ամ-
բաստանութեամբ մը պաշտօնանկ ընելով՝ ա-
նոր տեղ Պարսիկ մը կարգեց : Աննախընթաց
ճնշումը որուն վճենթարկուէին եկեղեցին եւ ե-
կեղեցականները՝ զանոնք վհատեցնելու եւ
վարկաբեկելու համար կը գործադրուէր եւ
գուշակել կուտար գալիք փոթորիկը :

Ղազար Փարպեցին դէպքերու երկար շրդ-
թային իբրեւ սկզբնական օղակը կը յիշէ Սիւն-
եաց տան մէջ ծագած գժտութիւն մը : Նոյն
տոհմին մէկ շառաւիղը Վարդավաղան՝ դրժ-
բաղդ ամուսնութիւն մը կատարած էր Սիւն-

եաց տանուտէր՝ Վասակ իշխանի աղջկան հետ : Աներէն հալածուած և վտարուած փեսան՝ Պարսից սպարապետ Միհրներսէի քով ապաստանեցաւ եւ վրէժխնդրութեան սիրոյն համար հաւատուրաց եղաւ :

Պարսից ծերունի սպարապետը Միհրներսէի որ Շահին մօտաւորագոյն խորհրդականն էր՝ երկրին ամենէն բանկայ պետական անձը՝ եւ յունատեաց մը՝ ասիկա լաւագոյն առիթը կը նկատէր մտադրուած ձեռնարկը շարժման մէջ դնելու : Հայաստան, Վրաստան եւ Աղուանաց երկիրը՝ Պարսից լուծին տակ գտնուելով հանդերձ՝ իբրեւ քրիստոնեայ սիրալիր յարաբերութիւններ կը մշակէին Պարսից թխերիմ թշնամիներուն հետ : Այս ազգերուն միահաղոյն կրօնափոխութիւնը պիտի տար առատ հոգեւոր հունձք մը գրադարչտի Արքայութեան համար եւ պիտի զօրացնէր Պարսկական տէրութիւնը : Եւ որովհետեւ անոնց կարեւորագոյնը Հայաստան էր եւ Հայաստանի կարեւորագոյն տարրն ալ իշխանաւոր գերդաստաններ էին՝ ուստի պէտք էր ասոնցմէ սկսիլ : Հայ նախարարներուն նախանձին ու փառասիրութեան իբրեւ գրգիռ՝ պէտք էր անմիջապէս փառքերով եւ պատիւներով յղողել տւրացող Վարազվաղանը :

Յազկերտ յօժարակամ անսաց Միհրներսէի տաղրանքներուն եւ Մազդեզական վարդապետութեան վրայ գրութիւն մը խմբագրել տարով՝ հրովարտակի մը հետ ղրկեց Հայաստ-

տան : Երկրին պետերը պաշտօնապէս կը հրաւիրուէին պաշտելու Արեւը, Լուսինը եւ Կըրակը :

Մեր պատմութեան մէջ՝ նշաններ կան որոնցմէ կրնանք հետեւցնել թէ Պարսիկները՝ թէ Գ. եւ թէ Դ. դարուն մէջ՝ իրենց Հայաստանը ըրած արշաւանքներուն՝ կրօնական պատերազմի եւ հաւատարմութեան հանգամանք մը տուած էին : Բայց Հայաստանի՝ պաշտօնապէս Արեւելեան տէրութեան կցուելէն աւտի՝ ասիկա առաջին յարձակումն էր որ կ'ըլլար Հայոց կրօնքին վրայ * :

Յուզումը մեծ էր Եկեղեցական եւ Նախարարական շարքերուն մէջ : Առաջնորդները որ քաջ գիտէին թէ ազնուականութեան եւ թէ ժողովուրդին մտքի վիճակը՝ լրջօրէն կը վախնային թէ մի գուցէ Պարսից դերը շուտով արմատ ձգէր թերահաւատ եւ վառամտ սրտերու մէջ :

Տանուտէրներ եւ իշխանազուաններ, որոնց մէջ էր Հայոց մարզպան՝ Վասակ Սիւնդի եւ իր

* Ոչ Եզիշէ եւ ոչ ալ Ղազար Փարպեցիմ մեզի կուտան հարազատ գրութիւնը եւ անոր Հայոց կողմէ տրուած պատասխանը : Բայց այս պաշտօնաթուղթերու ընդհանուր պարունակքեանց մասին՝ երկու հեղինակներու վկայութիւնը նոյն է եւ վստահելի : Սա ալ դիտելի է որ Եզիշէի հրովարտակը Միքրմերսեհէն է՝ իսկ Ղազարինը՝ քազաւորէն :

վերջի կուսակիցներէն մէկ նրկուքը՝ ականաւոր եպիսկոպոսներու, երէցներու եւ վանականներու հետ միասին երբեմնի արքայանիստ Արտաշատին մէջ ժողով գումարելով՝ պատասխանեցին Պարսից արքունեաց թէ կրօնական ճշմարտութիւնը իրենց կողմն է՝ իսկ զբաղաչտական կրօնքը սոսկ ծիծաղաշարժ բարբաջմունքէ կը բաղկանայ: Իրենց օրէնքով, կ'ըսէին, պարտաւոր էին հնազանդիլ իրենց նրկուքաւոր տէրերուն՝ որպէս Աստուծոյ: Ինչպէս անցելոյն մէջ՝ հիմա ալ սրատրաստ էին սիրայօժար վճարել պահանջուած հարկերը՝ մինչեւ իրենց վերջին լուսան եւ թափել իրենց արիւնքը մինչեւ վերջին կաթիլը՝ բայց իրենց կը վերապահէին իրենց հողերն վրկութեան խնդիրը*:

Նամակին համարձակ եւ քչիկ մըն ալ անխոհեմ ոճը՝ որ թերեւս խնդրոյն կտրուկ վախճան մը տալու զխտումով գործածուած էր՝

* Եղիշէի այս նամակին իբրեւ պատնէն տուած գրութիւնը պերնախօս աստուածաբանութեան սփանչելիք մըն է եւ ուշագրաւ արտայայտութեանց գանձարան մը. Օրինակ՝ սա իմաստասիրական խօսքը որուն հիմերը դրժուար պիտի ըլլայ գտնել հին Հայրապետաց գործերուն մէջ. «Քանզի յորժամ լսես թէ յոչընչէ արար Աստուած գամենայն աշխարհս՝ բանիւ ծնունդ իմասցիր զարարածս եւն. եւն.:

Միհրնեբրսեհի եւ իրեն կուսակից մոզպետին առիթ տուին թարգաւորին զայրոյթը հովահրելու Հայոց դէմ: Եթէ Հայերը Յոյներէն օգնութեան յոյս չունենային՝ ինչպէ՞ս պիտի ժլտէին ասանկ չեզու գործածել:

Եւ հոս կը սկսի հսկայ եղբրերգութեան առաջին արարուածը: Թարգաւորը, խիստ նամակով մը Հայոց կարեւորագոյն իշխաններն ու տանուտէրերը եւ Վրաց Աշուշա բղեջիւր Դուռը կանչեց եւ յամեցողներուն մահուան պատիժ սպառնաց: Յականէ յանուանէ յիշուածներն էին Հայոց մարզպանը՝ Վասակ Սիւնի, Ներշապուհ Արծրունի, Արտակ Ռշտունի, Գաղիչոյ Խորխոռունի, Հայոց սպարապետը՝ Վարդան Մամիկոնեան, Մոկաց Արտակ իշխանը, Մանէճ Ապահունի, Վահան Ամատունի, Գիւտ Վահեւունի, եւ Շմաւոն Անձեւացին, ամենքն ալ տանուտէրեր:

Ահն ու տարապիւր ինկաւ բոլոր սրտերուն մէջ: Ձերթալ՝ ապաստամբութիւն պիտի նշանակէր, բայց զնացողը ետ պիտի դա՞ր եւ ի՞նչ վիճակի մէջ: Այս ճակատագրական հրաւերը ընդունողներէն անոնք որ կրնային՝ մէկտեղ հաւաքուեցան եւ որոշեցին երթալ՝ բայց Աւետարանին վրայ անդամով ուխտ ըրին որ՝ ինչ որ ալ պատահի՝ պիտի չուրանան իրենց հաւատքը: Այս արթիւ տեսակ մը դիմադրական դաշնակցութիւն կազմուեցաւ Հայոց, Վրաց եւ Աղտանից միջեւ:

Ճանապարհորդները Տիգրոն հասան Աւագ
Շարաթ օրը : Թագաւորին կողմէ դիմաւորող-
ներ ղրկելու սովորական քաղաքավարութիւնն
իսկ այս անգամ զլացուած էր՝ բայց հրապա-
րակին վրայ անոնք երեւցան զուարթ դէմքով
որպէս թէ անձկութեան յետ պատճառ չի կար :
Յաջորդ օրը ներկայացան Յազկերտի որ բար-
կաճայթ բառերով ընդունեց զիրենք :

«Դուք զիս ի՞նչ բանի տեղ դրած էք եւ
ի՞նչ համարում ունիք ձեր անձերուն վրայ»
գոռաց նա :

Նախարարները պատասխանեցին՝ «Մենք
ձեզ թագաւոր կը ճանչնանք, Աստուծոյ պէս՝
դուք ալ իշխանութիւն ունիք ասպրեցնելու եւ
մեռցնելու մեզ եւ բոլոր անոնք որ ձեր տէ-
րութեան մէջ կը գտնուին :»

«Այս խօսքերուն եւ ձեր նամակին մէջ հա-
կասութիւն կայ», յարեց Յազկերտ, «Բանի որ
ձեր հնազանդութեան մէջ վերապահուամ մը կ'ը-
նէք : Բայց այդ վերապահուածը՝ մեզի համար
կարեւորագոյն խնդիրն է : Մենք ձեր անցեալ
ծառայութիւններէն դուրս ենք : Բայց մեր կամքն
է որ դուք դառնաք նաեւ ձեր կորստեան ճամ-
բէն : Ուստի, եթէ յամառիք ձեր մոլար օ-
րէնքին մէջ, դուք, Հայեր, Վրացիներ եւ Աղ-
ուաններ, ձեր հին հաւատարմութիւնը առ ո-
չինչ պիտի գրենք եւ ձեզ բնաջինջ պիտի ընենք
ձեր ընտանիքներով միասին» :

Ասոր վրայ Վարդան Մամիկոնեան խօսք
արձեշտով պատասխանեց թէ՛ ինք միշտ անթերի
եղած էր թարգաւորին հանդէպ իր հպատակի
պարտականութեանց մէջ եւ եթէ կրնար՝ պատ-
շատ էր բազմապատկուած անձով, ուժով եւ

* * *

** Վարդան Մամիկոնեան իր մօր կողմէն
Սահակ Կաթողիկոսի թոռն էր, եւ հաւանօրէն
աւելի կրթուած քան միւս նախարարները՝ շը-
նորհիւ իր մեծ հօր խնամուց:

Մամիկոնեանց տոհմային արանդութիւնը
կ'ըսէր թէ իրենց նախահայրքնեաց երկրէն ե-
կած էին եւ հոն արքունական ընտանիքին կը
պատկանէին: Այս ընտանեկան կապակցութեան
իբրեւ ապացոյց կը յիշուի նաեւ սա պարագան
թէ Մամիկոնեանք Զինացիներու նման՝ ցցունք
(փէրչէմ) կը կրէին: Թէպէտ ցցունք կրելու
սովորոյթը միայն չինաստանի յատուկ չէր այլ
յաւէտ մոնկոլեան յատկանիշ մըն էր, եւ մին-
չեւ անգամ ծանօթ Քետացիներուն՝ դժուար է
հերքել Մամիկոնեանց Զինական ծագումը:

Բայց եւ այնպէս անոնց Զինաստանէն մեկ-
նումը՝ եթէ իրողութիւն ալ համարուի՝ շատ ա-
ւելի հին դէպք մը ըլլալու է քան անոնց Հայաս-
տանի մէջ երեւումը: Այս վերջին դէպքը կապ
ունէր Պարթեւաց անկումին եւ սասանեան պե-
տութեան սկիզբին հետ՝ Դ. դարուն առաջին
կիսուն մէջ: Մասնաւորապէս ուշագրաւ է ի-
րենց անհաշտ ատելութիւնը Պարսից դէմ, ի-
րենց հաւատարմութիւնը Արշակունեանց ցեղին

յօժարութեամբ ծառայելու ու գոհուելու : Բայց իրեն համար անկարելի էր վաճառել Աստուծմէ ընդունուած կրօնք մը՝ մարդկային երկիւղի եւ սնոտի փառաց փոխարէն : Ուստի արեւելի պիտի ընտրէր մեռելի՝ քան ապրիլ ուրացութեամբ* :

Միւս իշխանները նկատելով Յազկերտի ըզգացումներուն փոթորկայոյց վիճակը՝ քանի մը օր պայմանաժամ խնդրեցին հայրենի հին աւանդութիւն մը քակտելու եւ նոր օրէնք մ'ընդգրկելու այս ծանրակշիռ հարցը մօտէն քննելու համար : Պայմանաժամը շնորհուեցաւ : Իրենց խորհրդակցութեանց մէջ կար արքունական մը

եւ իրենց սերտ բարեկամութիւնը Լուսաւորչի (Պարթեւ) ընտանիքին հետ :

Բանասիրական տեսակետէ անկարելի է չի տեսնել որոշ առնչութիւն մը ՄԱՄԻԿՈՆ անուան եւ Եսթերի գրքին մէջ (Ա. 14, 16, 21) յիշուած ՄԵՄՈՒԿԱՆԻ հետ՝ որ Աֆիմենեան գահուն առջեւ կանգնող եօթը նախարարներէն մէկըն էր : Եթէ այսպէս է՝ Մամիկոնեանց ետին տոհմային մեծութեան եւ կարեւորութեան տէր որքա՞ն սերունդներ կարելի է նշարել : Արդարեւ իրենց ծայրագոյն արեւելէն արտագաղթը տեղի ունեցած ըլլալու է Աֆիմենեան հարստութեան առաջին շրջանին մէջ :

* Այս հարցաբանութիւնը շարագրուած է Փարպեցոյ հետեւողութեամբ : Եղիշէինը տարբեր եւ աւելի երկար է՝ բայց առանց իմաստի կարեւոր տարբերութեան :

որ զաղտնապէս քրիստոնէութեան յարած էր եւ որ հասկնալով թէ թագաւորը մտադիր է իր արհուելի սպառնալիքը գործադրելու՝ անոնց մէկ քանիին թելադրեց որ նախարարները առ երեսո ուրացութեամբ մը ծուղակէն ազատին եւ իրենց ընտանիքները թագաւորին վայրագ կատաղութեան ձեռքը անպաշտպան չի թողուն: Երբ անգամ մը հայրենիք իյնային հոն պիտի որոշէին թէ իբրև քրիստոնեայ կրնա՞ն ապրիլ՝ թէ խղճի ազատութեան համար՝ տնով տեղով դէպ արեւմուտք պէտք է գաղթեն:

Մեծ վարանտով հաղորդեցին այս ծրագիրը Վարդանի տր առջի բերան խստորէն բողոքեց անոր դէմ՝ բայց վերջապէս գտան գանիկա ալ համոզելու միջոցը:

Նախարարները իրենց սիրելիներուն ի նըստատ առժամանակեայ ուրացութիւն մը իբրև վտըրագոյն չարիքը ընդունելով՝ միաբերան Աւետարանին վրայ ուխտեցին տր երբ հայրենիք դառնան՝ կամ պիտի կռուին եկեղեցւոյ եւ հայրենիքին պաշտպանութեան համար եւ կամ տարագրութեան ճամբան պիտի բռնեն: Եւ հոս է որ անոնք իրենց վաղեմի անխոհեմութեամբ ցանեցին հողմ մը որուն հունձքը պիտի ըլլար աներեւակայելիօրէն վայրագ մրրիկ մը:

Հաւանօրէն առաւօտեան պահուն՝ բոլորը միասին գնացին կրակատան արագունակ պաշտամունքին ներկայ գտնուելու՝ մեծաւ մարտամբ առ երեսո, բայց տմանց քրիստոնէական հա-

լատքը արդէն սկսած էր տկարանալ: Յագ-
կերտ որ՝ նորէն արեւելքէն Քուչանաւան յար-
ձակումի մը գոյժը առած էր եւ կ'աճապարէր
դէպի սահմանազլուխ խիզարկելու՝ ուրախու-
թեամբ ընդունեց այս գիշումը: Իր գոհունա-
կութեան իբրև արտայայտութիւն՝ երեք երկիր-
ներուն երէց իշխաններուն թագաւորական ըզ-
գեստ հազցուց եւ ամենուն ախրտը շինել փոր-
ձեց պատիւներու եւ խոչոր պարգեւներու տե-
ղատարաւիով մը: Հայաստանի գլուղերէն եւ
աւաններէն շատերը որոնց տուրքերը ուղղակի
արքունիք կ'երթային աւելցան նախարարական
կալուածքներուն: Եւ թագաւորը ապահովու-
թեան համար Վրաց Բղեշխը եւ Վասակի երկու
որդիքը (Բարիկ եւ Աղլններսեհ) իբրեւ պա-
տանդ վար դնելով՝ մնացածը Հայաստան ճամ-
բեց 700 միախոնար մողերու ընկերակցու-
թեամբ:

Ըստ Եղիշէի՝ ստաջին կշտամբանքը, որ
ուրացողներուն վիճակեցաւ, կուգար Պարսից
բանակին Քրիստոնեայ գինուորներէն որոնք
ահեղ հալածանքներու ներքեւ կը վատարէին
իրենց ծառայութիւնը: Անոնց քահանաները ա-
դէտին լուրը շուտով Հայաստան հասցուցին:

Գ. ՎԵՐԱԴԱՐՁԸ

Ուղեւորները չորրորդ ամսուն Հայաստան
հասան: Եկեղեցականներու առաջնորդութեամբ
մեծ եւ տխուր բազմութիւն մը գիրենք դիմա-

Generated on 2017-07-06 10:26 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.aa0008286874
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ւորեց Արարատեան դաւառին Անդղ* գիւղը՝ գլին-
 ուած խաչերով եւ աւետարաններով, սուրերով
 եւ վահաններով: Հաւանօրէն ճշմարիտ է Ն-
 ղիշէի պատմաբն թէ հոս՝ մոգերը կիրակի օր
 մը եկեղեցին կրակատան վերածելու փորձ մը
 ըրին զոր Ղեւոնդ երէցի հետեւորդները քարե-
 րով եւ բիլրերով ի դերեւ հանեցին: Ասանկ
 բռնադրաւումները, սակայն, չուտով տեղի
 տուին աւելի խաղաղասիրական մեթոտներու:
 Երբ նախարարք ցրուեցան իրենց տուները՝ վա-
 սակի հոգածութեան շնորհիւ՝ շուտով մոգերն ալ
 բաժնուեցան երեք երկիրներուն եւ անոնց մէջ
 իշխող կարեւոր գերդաստաններուն միջեւ: Ու
 սկսան անշշուկ կերպով քարոզել իրենց աղան-
 դը եւ տեղ տեղ ատրուչաններ կանգնել: Ա-
 նոնք որ կրակապաշտութեան կատակերգու-
 թիւնը Տիգրոն սկսեր էին ստիպուեցան զայն
 շարունակել Հայաստանի մէջ՝ ի մեծ գայթակ-
 դութիւն իրենց կիներուն, զաւակներուն, ծա-
 ոաններուն եւ ընդհանուր ժողովուրդին որոնք
 կը մերժէին մոգերուն վարդապետութիւնը լսել
 եւ նախարարներուն կեանքը կը դառնացնէին
 արցունքով, ցրտութեամբ եւ թշնամանքներով:
 Վարդան արդէն եկեղեցականներուն յարտնեղ
 էր պատահածը և իր ընտանիքին մէջ ստութեան
 դիմակը վար ստեր էր: Ուստի նախարար-

* Փարագաշեան իրաւամբ կը կասկածի այս
 տեղին մասին: Փարպեցին ուէ տեղ չի յիշեր
 (ԻԸ, ԻԹ):

ներուն խոստմնագանց վարանումը տեսնելով՝
իրեններուն հետ միասին ճամբայ ելաւ դէպի
Յունաց բաժինը որ շատ հեռի ջէր Տարօնէն :
Չէ՞ որ Տիգրոնի մէջ այսպէս ընել որոշուած
էր :

Սպարապետին մեկնումին բօթը շուտով հա-
սաւ Վասակի եւ ուրիշ իշխաններուն՝ որոնք ա-
տանկ տազնապի մը ատեն իր ներկայութիւնը
անհրաժեշտ կը համարէին եւ Ղեւոնդ երէցի
պէս վարեսոր եկեղեցականներ եւ քանի մը իշ-
խաններ ղրկեցին՝ զանիկա ետ դարձնելու հա-
մար : Պատգամաւորութիւնը՝ Վարդանը գը-
տաւ Բագրեւանդի նահանգին մէջ՝ եւ ցոյց տա-
լով Վասակի եւ միւս իշխաններուն միաբանու-
թեան մէկ նոր ուխտը՝ զայն համոզեց ետ կե-
նալ իր տարագրութեան խորհուրդէն :

Դ. ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Ասկէ վերջ՝ նախարարները եւ Վարդան
ժամանակ մըն ալ կրակապաշտութեան երեւոյ-
թը պահեցին եւ Տիգրոնի մէջ մնացող Վրաց
բղեշխին եւ Վասակի որդիքը խնայելու համար
մտադրուած ըմբոստական շարժումը կը ձգձը-
գէին : Ժողովուրդը իրողութենէն լուր չու-
նէր . եկեղեցիներու վրայ յարձակումներ կ'ըլ-
լային եւ ատրուչանները կը բազմանային :

Վահան Ամաստունի որ Վասակի դէմ հինա-
ւուրց տիւ մը ունէր՝ ամէն ճիգ կը թափէր որ

ապստամբութիւնը շուտ պայթի եւ մարզպանը նեղ կացութեան մէջ իյնայ :

Վարդան՝ առանց այս բաներուն կարեւորութիւն տալու սպասեց մինչեւ յաջորդ ամառը եւ այն ատեն միայն Հայոց բանակը հաւաքելով տարաւ Մաղկուտ գաւառը՝ Անգղ բերդին մօտ : Հիմա այլեւս ապստամբութեան լուրը կը տարածուէր արագօրէն եւ մոգելով՝ որ շատ տեղեր ուտելու հաց ալ դժուար կը գտնէին անցուղարձերը կը տեղեկագրէին Տիգրոն :

Իսկ Վասակ ի՞նչ կ'ընէր այս ատեն :

Եթէ Եղիշէ՝ մարզպանին ուրացումին իրաւանութիւնը, չարաշուք գործունէութիւնները եւ մատնչական սադրանքները կը չափազանցէ ալ՝ այս ամենուն մէջ կայ կէտ մը որ ամեն տարակոյսէ վեր է : Անիկա հիմա՝ հակառակ իր նախկին փոստումներուն եւ հանդիսաւոր երդումներուն՝ հակառակ Վարդանը՝ իր կամաւոր աքսորէն ետ կանչելուն՝ հեռու կը կենար ուխտուած միաբանութենէն, երկդիմի կեցուածք մը ունէր, մոգելուն հաւատատարածական աշխատութիւններուն ոչ միայն արգելք չէր հանդիսանար՝ այլ կարծես կ'ընծայէր պահանջուած օժանդակութիւնը եւ իր շուրջը կը կազմէր կասկածելի խմբակցութիւն մը : Յայտնաբէս հակառակ էր ապստամբութեան, կը յարատեւէր ուրացեալի դերին մէջ եւ իր առաջնորդութեամբ ստեղծուած անել եւ վտանգաւոր կացութիւնը ընդունելով կը մշտնջենաւորէր : Իր

ընթացքին մէջ զգուշաւորութենէ աւելի բաներ կ'ընդունչմարուէին :

Դէպքերը այս կէտին հասած էին երբ Վարդան՝ Վատակէն զատ՝ բոլոր կարեւոր իշխանները եւ եկեղեցականները հաւաքելով՝ յայտարարեց թէ այլևս յայտնապէս գործելու ժամը հնչած է : Չանդադան անուն գծուծ ազնուական մը այդ ժողովին լուրը հաղորդեց Վասակի և իր մատնութեան իբրեւ արդար վարձատրութիւն՝ Բագրեւանդի Բերդկունք գիւղին մէջ քարկոծուեցաւ նախարարներէն :

Հիմա ապստամբութեան կուտակիցները որոշեցին զինու զօրութեամբ բռնադատել Վասակը որ թողու իր անհատական եւ երկդիմի քաղաքականութիւնը եւ իրենց միանայ : Այս առթիւ կատարուեցաւ քաջածանօթ երդումը երբ Վասակ եւ բոլոր նախարարները՝ զինուորներուն հետ միասին Աւետարանին վրայ միաբանութիւն ուխտեցին եւ իշխանները գիրքը իրենց մատանիներով կնքեցին :

Ապստամբութեան առաջին գործն եղաւ՝ Չարեհաւանի մէջ հաստատուած ատրուչանի մը նուիրական կրակը ջուրը թափել (ինչ որ Պարսից համար գրեթէ աններելի արբապղծութիւն մըն էր) եւ մտգերը կապանքի տակ դնել : Միւս աղւտուն՝ արեւածագին այսինքն արեւապաշտներու համար ամենէն նուիրական ժամուն՝ ասոնցմէ մաս մը սրակոտոր ըրին :

Բանակը ասանկ գործերով չի գոհացաւ այլ նաեւ անապարեց գրաւելու այն բոլոր կարե-

ւոր բերդերը որտե՞ք Պարսից ձեռքն էին : Այսպէս համարտարած եւ հիմնական յեղափոխութիւն մըն էր որ կը ծնէր կրօնական ճնշումէ մը :

2. ԱՂՈՒԱՆԱԿԱՆ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Երբ ամառուան տօթակէզ օրերը անցան՝ Հայոց բանակը Արարատեան դաւառը իջաւ՝ որովհետեւ Աղուանաց եպիսկոպոսը եւ հազարապետը եկած էին լուր տալ թէ Հոնաց կողմէ Պարսից բանակը վերադարձած էր եւ Ճորայ մարզպան Նիխորական Սեբեակաթի հրամանատարութեամբ՝ արքունիքէն եկող նոր ձիաւորներու ու 300 մոգներու հետ միացած՝ երկիրը տակն ու վրայ կ'ընէր, ատրուշաններ վըր կանգնէր եւ Վռամական կրակը հաստատելով կ'ըրունադատէր մարդիկը զայն պաշտելու : Զի հնազանդողները մահուան կը դատապարտուէին եւ իրենց կիներն ու զաւակները կը աքսորուէին դէպի Տիգրոն : Ամէն պարագայի մէջ՝ Աղուանները տազնապի մէջ էին եւ իրենց տահմաններէն վտանգ կը սպառնար Հայոց : Վատակ կը ստիպէր Վարդանը որ օգնութեան հասնի Հայոց այս դաշնակիցներուն՝ եւ նոյն ատեն Վարդանի թերադրութեամբ՝ իր եւ Հայոց բոլոր աւագանիին կողմէն կնքուած նամակներ կը ղըր կէր Յունաց կայսեր, Անտիոքի սպարապետին՝ եւ արեւմտեան Հայաստանի իշխաններուն : Պոլիս զնացող ղեկարանութիւնը կազմուած էր սա

երեք անձերէն՝ Վահան Ամատունի, Հմայեակ Մամիկոնեան եւ Մերուժան Արծրունի * :

Յոյները ոչ միայն կարեւորութիւն չընծայեցին Հայոց օգնութեան աղաղակին այլ եւ նորապսակ Մարկիանոս կայսեր խորհրդականներէն Եփլալիոս Ատորին Յազկերտը վատահացուց թէ կայսրը միտք չունի Հայաստանի գործերուն միջամտելու :

Դեպքանութիւնը չի վերադարձած՝ անշուշտ Վասակի ստիպանքով՝ Հայոց բանակը բաժնուեցաւ երեք մասի, որոնց մին՝ որ հաւատարիմ զօրքերէ կը բաղկանար յանձնուեցաւ Վարդանի Աղուանական արչաւանքին համար. Երկրորդը՝ Ներչապուհ Ռմբոսեանի հրամանատարութեամբ կ'երթար Հեր եւ Զարեանդ Ատրպախոականի սահմանին հսկելու. իսկ երրորդը ուր հաւաքուած էին Վասակի համակիրները** կը մնար անվատահելի մարզպանին

* Եղիշէ կը յիշէ միայն Ատովմ Գնունի մը :

** Ասոնք էին՝ Տիրոց Բագրատունի, Գաղիշոյ Խոռխոռունի, Մանէն Ապահունի, Գիւտ Վահեւունի(?), Վարազշապուհ Պալունի, Արտէն՝ իշխան Արեղինից եւ Ներսէհ իշխանն Ուրծոյ եւ ուրիշներ : Նկատելի է որ կուսակցական բաժանումը տեղի ունեցաւ ոչ թէ ընտանեկան գծերու վրայ՝ այլ անձնական ընտրութեամբ : Եւ այն տոհմէն մարդիկ կը գտնուէին երկու կողմըն ալ :

ձեռքը : Այս բանակին հետ Վասակ դարսնամուտ կ'ըլլար իր երկրին Գեորգերուն մէջ՝ պատրուակելով թէ անկէ Պարսիկները յանկարծակիի պիտի բերէ :

Հօս մեր երկու պատմագիրներն ալ այնպէս կը ցուցնեն թէ Վասակ արդէն ներքնապէս Պարսից կողմն անցած էր՝ ճշմարիտ ուրացող մըն էր, տրամադիր էր դրժելու իր թուր ուխտերն ու երդումները եւ կը պատրաստուէր իր և երկրին ճակատագիրը իր ձեռքն առնելու՝ ընդդէմ միաբանութեան և ապստամբութեան կուսակիցներուն : Արդարեւ անիկա սկսած էր Հայաստան պատահածները եւ իր պարսկանպատ գործերը տեղեկագրել Միհրնբրտեհի, Դենչապուհի (Վեհշապուհի՝ ըստ Փարպեցւոյ) եւ ուրիշներուն՝ մինչ Աղուանաց երկիրը վրդովող Նիխորական Սերուխտին կ'իմացնէր Վարդանի գալուստը եւ զօրաց փոքրիկ թիւը :

Հազիւ թէ Վարդան Աղուանաց երկիրը հասած էր՝ երբ Պարսիկք Կուր գետը անցնելով եկան իր բանակին ընդ առաջ մինչեւ Խաղխաղ գեղը (որ Աղուանից թագաւորին ձմերոցն էր) : Վարդան իր բանակը երեքի բաժնելով՝ Կեղրոնը բռնեց եւ յարձակեցաւ իրենինէն աւելի մեծ ուժերու վրայ՝ որոնք թերեւս ժամանակ չէին տնեցած ինքզինքնին կարգաւորելու եւ որոնց կռնակը կուգար գետին : Այս ընդհարումին մէջ Գաղրիկ վիրաւորեցաւ, Մուշ Դիմաքսեան ճախճախուտ տեղ մը խրելով խեղդամահ եղաւ, բայց Հայոց բանակին աջ թեւին զօրապետը՝ Արշա-

ւիր Կամօտարական որ նոյն տիղմին մէջ ինկած էր՝ ձիէն վար ցատկեց եւ զայն զուրս քաշելով՝ սողմաթաթաւ, մէկ կօշիկով նորէն նետուեցաւ կռիւին մէջ և սպաննեց Վուրկը՝ Լփնաց թագաւորին եղբայրը։ Վերջապէս Պարսիկները յաղթուեցան եւ ի փախուստ մատնուեցան ասագին կորուստ տալով։ Հայոց սուրէն ազատողները՝ Կուր գետին ալիքներուն մէջ կը գտնէին իրենց մահը եւ կամ կ'երթային թաղուիլ ճախճախուստ անտառներուն մէջ։

Այս պարտութեան վրայ Պարսից բուն քանակը չի համարձակեցաւ ինքզինքը ցուցնել։

Վարդանի զօրքերը՝ թշնամոյն բանակատեղին եւ դիակները կողոպտելէ վերջ՝ անցան Կուր գետը Աղուանաց բերդերը գրաւեցին, եկեղեցիները ազատագրեցին եւ զինուած Աղուաններէն մեծ քաղմութեան մը ընկերակցութեամբ Հոնաց Դուռը կամ Պահակը Պարսից ձեռքէն կորզեցին ու քանդեցին եւ Աղուանից Վահան թագաւորին միջոցաւ՝ Հոները եւ ուրիշ բարբարոս ցեղեր հրաւիրեցին իրենց հետ գործակցելու ընդդէմ հասարակաց ոսոխին։

Է. ՎԱՍԱԿԻ ՀԱԿԱՇԱՐԺՈՒՄԸ

Մինչ Վարդանի բանակը այս սխրագործութիւններով կը փառաւորուէր և կը քաջալերուէր անդին Վասակ ալ սկսեւ էր գործի։ Դիմակը վար նետելով՝ իր ծրագրին հաշուոյն կը գրաւէր Հայ բերդերը եւ քաղաքները որ անպաշտ-

պան մնացած էին, կ'ասարատակէր երկիրը, կ'աւրէր եկեղեցիները եւ միաբանութեան պատգանոզ իշխանաց եւ եկեղեցականաց զաւակները գերի կը տանէր: Ամէն կողմ նամակներ կը դըրկէր եւ թագաւորէն հաղորդուած խաբուսեան գրութիւններ կը շրջաբերէր պնդելով թէ Թագակերտ Հայոց կրօնական ազգատութիւն շնորհած է եւ մինչեւ իսկ մոգերուն ջարդը ներած է պայմանաւ որ լքանեն Վարդանը: Բայց երբ Վարդանի յաղթական վերադարձը լսեց՝ իր երկիրներուն բերդերը ապաւինեցաւ իրեն հետ քշելով Մամիկոնեաններուն, Կամսարականներուն եւ ուրիշ ուխտապահ իշխաններուն զաւակները, զորս վերջն ալ Պարսից թագաւորին յանձնեց:

Այս միջոցին ձմեռը վրայ հասաւ: Վարդան իր զօրքերուն մեծ մասը ցրուեց՝ պատուիրելով որ գարնան նորէն հաւաքուին իր դրօշին ներքեւ: Ինք մնացեալ զօրքերով՝ Արարատեան գաւառէն Սիւնեաց երկրին մէջ վրէժխընդրական արշաւանքներ կը կատարէր: Նոյն ատեն միաբանեալ նախարարները գերի բռնուած Պարսիկ մը ղրկեցին իրաց վիճակը եւ Վասակին խորհուրդներ թագաւորին ներկայացընելու եւ իրենց համար բարեխօսելու: Այս պատգամաւորին խօսքերը կարծես վայրկեան մը ցնցեցին թագաւորին հաստատակամութիւնը: Ներողութեան եւ խաղաղութեան

հրովարտակ մը հանեց եւ քրիստոնէութիւնը
ազատ եւ օրինաւոր հռչակեց : Այս խմաստով
մասնաւոր հրովարտակ մըն ալ Հայաստան դըր
կեց : Բայց Վարդանեանք ուր տիրացած էին
երկրին կարեւոր բերդերուն եւ քաղաքներուն՝
կը կատկածէին թագաւորին անկեղծութեան
վրայ եւ իրենց միաբանութիւնը հաստատ կը
պահէին : Արքայական խոստումը յեւէ երաշ-
խաւորութիւն չէր մատուցաներ, յեւէ շօշափե-
լի գործով ինքզինքը չէր իրականացներ : Ընդ-
հակառակը՝ դեռ Միհրներսէս իր տիրապետող
դիրքին վրայ կը կենար եւ Վասակ Տիգրոնի
համարումը կը վայելէր եւ իր գործակալնե-
րուն միջոցաւ կը ջանար Վարդանանց խումբը
կղզիացնել եւ ցրուել : Իր ատելութիւնը մաս-
նաւորապէս ուղղուած էր Վարդանի դէմ եւ իր
քսութիւնները յաջողեցան Հայոց սպարապետին
արեւմտեան ազգակիցները (Աղձնեայ տոհմը)
իրմէն ուծացնելու եւ չէզոքութեան համոզելու :
Արդարեւ շատ չանցած՝ թագաւորը հայ ա-
պրստամբները՝ խօսքով սիրաշահելու անկա-
րող եւ թերեւս իր գինուց զօրութեան վստա-
հելով՝ վերադարձաւ հին ծրագրին : Լսուեցաւ
թէ Միհրներսէս Փայտաւարան հաստատուած՝
Վասակի հետ կը հաղորդակցէր եւ Հայոց վը-
րայ գինուորական արշաւանք մը կը պատրաս-
տէր :

ցաւ մարտիրոսական մահուան գեղեցկութեան վրայ, Մակարայեցւոց պատմութիւնը յիշեց ըսաւ թէ այս կռիւը տեսակ մը քաւութիւն էր իր եւ իր ընկերներու տւրացութեան համար եւ քաջութեան յորդորեց: Նոյնպէս հանճարեղ Յովսէփ երէցը՝ որ հակառակ իր եկեղեցական ստորին աստիճանին Հայոց կաթողիկոսն էր եւ հրալեզու Ղեւոնդ Երէցը՝ գիշերն ի բուն քարոզեցին եւ վարդապետեցին: Առաւօտեան դէմ բացօթեայ սեղան մը կանգնեցին եւ սրատարազի խորհուրդը կատարեցին: Որովհետեւ դեռ կը տիրէր մկրտութիւնը յետաձգելու հին սովորոյթը՝ չի մկրտուածները մկրտուեցան եւ ամբողջ բանակը հաղորդուեցաւ: 451 թուին Յունիսի 2րդ օրը արեւածագին՝ երկու կողմէն ճակատ կազմեցին: Պարսիկները իրենց ահաւոր փիղերը՝ շարժական աշտապրակներու պէս շարեցին եւ անոնց մէջտեղը լեցուցին զօրքերով: Փողերը պատրաստութիւն կը հրամայէին: Վասակ որ վերջին անգամ ջանացեր էր ցրուել հայ զօրքերը՝ Պարսից զօրապետին քովը կեցած պէտք եղած տեղեկութիւնները կուտար Հայոց քաջերուն մասին: Բայց իր հետեւորդները չի մասնակցեցան կռիւին:

Վարդան իր զօրքերը բաժնեց չորս գունդի: Առաջինը յանձնեց Արծրունեաց Տանուտիրոջ* եւ անոր նիզակակից (օգնական) տը-

* Հաւանօրէն Եղիշէի Ե. Յեղանակին ըսկիզբը յիշուած Ապրսամ Արծրունին է այս:

աււ Մովսէս Արտակ իշխանը, Միհրջապուհ մարդպետը եւ ուրիշներ: Երկրորդը յանձնեց Խորէն Խորխոռունիին, Արսէն Ընծայեցիին եւ Ներսէս Քաջբերունիին: Երրորդին գլուխը կարգուեցան Թաթուլ Վանանդեցիին եւ Տաճար Գնդունիին: Վարդան առաւ չորրորդ գունդը՝ իր Համազասպ եղբոր եւ իր քաջարի փեսան Արշաւիր Արշարունիի հետ: Այս 4 գունդերէն մէկը՝ վերջապահ նշանակուած էր (Փարպեցի): Բայց այս մասին մթութիւն եւ շփոթութիւն կայ:

Յարձակումը սկսուեց Երկուստեք Տղմուտ գերտին եզերքը: Կ'երեւի թէ առաջին ընդհարումը Հայերուն նպաստաւոր եղաւ: Բայց շատ չանցած Պարսից աջակողմին ընտրեալ զօրքերը Հայոց ճակատողմը խախտեցին իր տեղէն: Զայս տեսնելով՝ Վարդան անոնց վրայ խոյացաւ եւ խառնելիտուն մղեց դէպի փիղերը, կոտորեց և ի փախուստ մատնեց: Ասիկա Պարսից շքեղագոյն եւ զօրաւորագոյն գունդն էր որ կը ճանչցուէր Մատեան (Մարաղա՞ն) անունով: Բայց նոյն ատեն Մուշկան Նիւսարաւորտ որ նկատեց թէ Հայոց բանակին կարեւոր մէկ մասը լերանց հովիտներուն մէջ կը յամենար եւ ճակատամարտին նետուելու կը դժկամակէր* քաջալերեց Պարսիկները որ Վարդանի

* Փարպեցին կ'ըսէ թէ փախուստ տուին: Հաւանօրէն վասակի ջանքերը բանակին մէջ ապարդիւն չէին մնացած:

գնդին դէմ կենան : Բայց երբ անտնք ալ չբաւեցին՝ առաջ քշել տուաւ փղապետը՝ որ փիղերուն կռնակի վրայ բարձրացող դիտանոցներէն գալարափողերով Պարսից յառաջամարտիկ զօրքերը կանչեց եւ Վարդանը շրջապատել տուաւ : Հոն Վարդան՝ իր նիզակակից ընկերներուն հետ առիւծի պէս կռուելով ինկաւ իբրեւ ճշմարիտ զինուոր մը եւ նահատակ մը : Պատերազմը շարունակեց մինչեւ երեկոյ՝ բայց բաղդը Հայոց դէմ դարձած էր : Փոքրիկ եւ հետզհետէ նուազող գունդերու անկարելի էր սպառել թշնամուցն անհամեմատօրէն աւելի մեծ ուժերը : Այս անհաւասար պայքարին մէջ՝ շատերը յոգնած պարտասած՝ սկսան փախչիլ : Պարսիկները զիրենք կը հետապնդէին, կը շրջապատէին, կը ջարդէին կամ ողջ ողջ կը բռնէին : Այս վերջիններէն թմանք գիշերը իրենց պահապանները ջարդելով խոյս տուին, բայց ուրիշներ առտուն բանակին մէջ բերուելով սրակոտոր եղան կամ փիղերուն ոտից տակ կոխկռտուեցան : Պատերազմին մէջ մեռնողները միայն 276 հոգի էին : Ասոնց մէջ էին Վարդան, Հմայեակ, Սորէն, Տաճատ եւ Ներսէս զորս յիշեցինք արդէն եւ Արտակ Պալունի, Հմայեակ Դիմաքսեան, Գարեգին Սրուանձտեան, Մանուկն Արսէն Ընծայեցի եւ Վահան Գնունի : Ջարդով մեռնողներուն թիւը հասաւ 740ի : Պարսիկներէն ին-

կան 3,544 մարդ* : Հոս կը վերջանայ Վարդա-
նանց պատերազմին պատմութիւնը և ժգնաժա-
մին ատաղին դրուազը : Նաեւ հոս կը վերջա-
նայ իրապէս՝ կրօնական հարաժամքը Հայաս-
տանի մէջ : Ասկէ վերջ եղած ուղղմական գոր-
ծողութիւնները նուաճումի ջանքեր էին :

* * *

Ժ. ԴԵՐԵՐԸ ԵՒ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ

Այս է Վարդանանց պատերազմը իր խոշոր
գծերով : Ի՞նչպէս պէտք է դատել զայն : Ա-
նիկա անհրաժեշտ զոհողութիւն մըն էր որ ըս-
տացաւ իր յաղթանակը թէ տաք գլուխներու
գործ մը որ յանգեցաւ երկարատեւ խառնաշը-
փոթութեանց եւ անդարմանելի կորուստներու :
Գարագաշեան որ սկեպտիկ մըն էր եւ պատմա-
գրութեան մէջ կը սիրէր հին արժէքները եւ
վճիռները յեղաշրջել՝ իրաւունք տուած է Վա-
սակի եւ քննադատած է Վարդանն ու իր հետե-
ւորդները : Բայց ոչ միայն մեր տասնեւհինգ
դարու պատմագրութիւնը՝ այլ վերջերս Գեր-

* Պարսից եւ Հայոց կորուստներուն հա-
մեմատութիւնը անհասկանալի է : Հայերը արդ-
եօք անհաւատալի քաջութեամբ կռուեցան թէ
Պարսից կորուստներուն թիւը չափազանցուած
էր : Ամէն պարագայի մէջ՝ թէ Եզիշէ եւ թէ
Ղազար համաձայն են այս կէտին վրայ :

մանացի արեւելքագէտ մը՝ Եռութի՛ իր «Պարսից Պատմութեան» մէջ լռելեայն ընդունած է մեր երկու աղբիւրներուն ճշմարտախօսութիւնը եւ Վարդանանց առողջ դատողութիւնը :

Վասակի քաղաքականութեան ի նպաստ կրնան յիշուիլ միայն ա) իր հաստէն տարիքը եւ փորձառութիւնը, բ) իր երիտասարդութեան օրերուն քրիստոնէական խանդը, գ) Պարսկաստանի պէս հզօր տէրութեան մը դէմ մաքառելու անխոհեմութիւնը, դ) իր զաւակները պատանդ տուող հօր մը զգացումները, ե) կացութիւնը՝ քիչ մը համակերպութեամբ եւ քիչ մըն ալ էնթրիկներու միջոցաւ բարւոքելու կարելիութիւնը եւ վերջապէս՝ զթագաւորին անստոյգ զիջումը: Ասոնք բոլորն ալ տարակուսելի կէտեր են :

Իայց ապստամբութեան անհրաժեշտութիւնը իրեն կողմէ ունի շատ աւելի ծանրակշիռ նկատումներ :

Վարդանի կուսակցութեան անդամներուն իմաստութիւնը եւ փորձառութիւնը կասկածի տակ դնելու բնաւ պատճառ չունինք: Անոնք շատ աւելի կարեւոր անձնաւորութիւններ էին քան Վասակի ընկերները, աւելի անձնուէր, աւելի ուսեալ եւ նոյնքան տեղեակ Պարսկաստանի գործերուն (եւ քաղաքականութեան որքան Վասակ: Երկրին անդորրութիւնը վրդովող մեքենայութիւնները ծնած էին ոչ թէ իրենց՝ այլ արքունեաց խորհուրդներէն: Չենք գիտեր թէ դէպքերուն ընթացքը ինչ պիտի ըլլար՝ եթէ

նախարարներուն ուրացութիւնը տեղի տւնեցած չլլար: Վստահարար կրնանք ըսել թէ — Վասակ ինք էր պարագլուխը այդ դժբաղդ ուրացութեան որ բարոյապէս քայքայիչ ազդեցութիւն մը պիտի բանեցնէր ժողովուրդին մըտքին վրայ եւ լայնարաց դուռը պիտի ըլլար ուրկէ քրիստոնէութենէ շատ նուազ արժէք ունեցող կրօնք մը ներս պիտի մտնէր եւ տաք պիտի կազմալուծէր երկիրը: Արդէն Մովսէս Սորենացիին հաւատքած եւ մեզի կտակած հին Հայկակառն անունները տեղի տուած էին Պարթեւական եւ Պարսկական անուններու: Պարսկերէնը եւ Պարսիկ քաղաքակրթութիւնը ժողովրդական էին Հայոց մէջ՝ որոնք առատաբար կ'իրացնէին անոնց ցբառերը եւ սովորոյթները: Ուրացողներուն երկրորդ սերունդը այլեւս չպիտի յիշէր ուրացութեան պարագաները եւ մոլեռանդօրէն պիտի յարէր նոր կրօնքին: Այսպէս եղած է միշտ եւ այս էր Յազկերտի եւ Միհրնեբսեհի ուզածը: Ուստի տրուած ըլլալով արքունիքին Քրիստոնէութեան դէմ տածած խորարմարտ հակակրութիւնը եւ հալածանքի մէջ ցոյց տուած յարատեւութիւնը՝ միայն մէկ ապահով եղանակ կար՝ նախարարներու կրօնափոխութեամբ Հայաստանի մէջ ստեղծուած վրտանգաւոր վիճակը բարւոքելու: Պէտք էր ուրացութիւնը իբրեւ բռնութեան տակ գործուած կեղծիք մը խոստովանիլ ժողովուրդին առջեւ, ամէն կարելի միջոցներով երկրէն արտաքսել զբարդաչտականութեան օտարոտի միսիոնարներ

բը եւ զինուիլ ինքնապաշտպանութեան համար :
Եթէ աստնցմով թագաւորը եւ իր խորհրդա-
կանները չզգաստանային՝ ոչինչ կրնար զանոնք
զդաստացնել : Բայց միւս կողմէ ապստամ-
բութեան Հայոց վրայ պարտադրած դիմադրա-
կան ոգին եւ զոհողութիւնը եւ մանաւանդ միա-
բանութեան առաջնորդներուն կորովի կեցուած
քը պիտի սրտապնդէր ժողովուրդը բարոյապէս
եւ խորունկցնէր անոր հաւատքը : Ասանկ պար-
ագաներու տակ սարսուռիւն եւ ձախողու-
թիւն անկարելի էին : Ապստամբութեան զէն-
քերը կրնային ջախջախուիլ եւ բանակները
ջարդուիլ՝ բայց անոր անդրդուելի համոզու-
մին , անյողդողդ քաջութեան եւ բոսորագեղ
մարտիրոսութեան առջեւ Յազկերտները եւ
Միհրնէրսեհները ստիպուած էին յետս ընկըր-
կիլ : Իսկ եթէ Յոյները օգնութեան դային ,
Հայերը կատարելապէս միանային եւ Հոներն
ալ Պարսիկները քիչ մը աւելի զբաղեցնէին՝ ա-
պըստամբութիւնը կրնար մինչեւ իսկ քաղաքա-
կան ազատագրումի յանգիլ : Վատակ ի՞նչ ու-
նէր որ կրնար բաղդատուիլ ասանկ բանական
ծրագրի մը հետ :

Վատակի կեանքին ամենէն մեծ եղերերգու-
թիւնը , իր ազգասիրութեան եւ քրիստոնէու-
թեան վրայ անջնջելի սրատ մը բերող բարո-
յական թերութիւնը՝ Վարդանանց այս սխա-
ճառաբանութեան հանգէպ իր բռնած բացասա-
կան դիրքն է : Անշուշտ դժուար էր գորովա-

գութ հօր մը համար զոհել իր զաւակները եւ
խաղաղասէր մարդու մը համար սրայքարի մէջ
մտնել: Բայց եթէ թողին ու եկեղեցւոյ ապա-
հովութիւնը կը պահանջէր ասանկ պատարագ
ժը՝ Հայ իշխան մը կրնա՞ր զայն մերժել: Ե-
թէ անիկա ապստամբութենէն իր ձեռքը լուա-
ցած եւ մէկդի քաշուած ըլլար՝ կրնայի՞նք գին-
քը վատասիրտ կոչել՝ բայց պիտի վարանէի՞նք
«մատնիչ» անուամբ որակելու իր ծերունագարգ
դէմքը: Սակայն աւաղ, որ անիկա իսկապէս եւ
անընդմէջ մատնեց Հայ դատը՝ երբ գիտակցա-
բար դրժեց ուրացութեան պայմանին, եւ կոր-
կին եւ կրկին ոտնակոխ ըրաւ իր ներդրումները,
երբ օրինակով եւ ազդեցութեամբ զարկ
տուաւ կրակապաշտութեան ծաւալումին, երբ՝
փոխանակ իբրեւ իր հայրենիքին մարգպանը՝
արքունեաց առջեւ սարգելու Հայոց հոգեբա-
նութիւնը եւ հալածանքին անխուսափելի ելքը՝
տակաւ հլու գործիք մը դարձաւ նենգամիտ եւ
հայատեաց Միհրներսեհի ձեռքը եւ ջանաց
պարսկամոլ կուսակցութիւն մը կազմելու, երբ
զաղտնաբար ջանաց քանդել միաբանութիւնը և
զանիկա զրկել ամէն արտաքին օժանդակուե-
նէ եւ յայտնաբար անոր դէմ դարձաւ նոր եւ
հրատարակային ուխտէ մը վերջ: Կրնայ ըլլալ
որ իրեն վերագրուած լրտեսութիւնը կատարած
չըլլայ, թէպէտ երեւոյթներն իրեն դէմ էին,
կրնայ ըլլալ որ թագաւորին վերջին խոստում-
ներուն ինք հաւատացած ըլլայ, կրնայ ըլլալ...

Բայց իր նկարագիրը այնքան շիւ էր, իր գործերը այնքան լեցուն էին հակասութեամբ եւ իր վերջի ժամանակներուն վարմունքը այնքան որոշապէս հակազգային քնոյթ ունէր որ իրաւամբ իր թշնամիները զինքը խարակեցին իբրեւ անձնական փառասիրութիւններ հետապընդող մատնիչ մը: Հայաստանի վրդովումներուն պատասխանատուութենէն Վասակի խոշոր բաժինը կը տեսնուի սա պարագայէն թէ Վարդգանաց ճակատամարտէն վերջ՝ փոխանակ թագաւորին կողմէն վարձատրուելու՝ Հայոց մարզպանը անարգուեցաւ և պատժուեցաւ: Իր տէրերն իսկ հասկցելո՞ւ էին թէ անոր կամակատարութիւնը զիրենք սխալ շաւիղներու մէջ մոլորոցուցած եւ պարսկական շահեցուն վնասած էր:

Վասակ՝ ամէն ցեղերու եւ ազգերու մէջ տեսնուած երկմիտ ու տկար, բարոյապէս անկայուն, անձնամուլ եւ նախանձոտ բնութիւններէն էր, որոնք ձգձգումներու եւ ստորնութիւններու ճամբով կը համնին դաւաճանութեան դարչելի դիրքին եւ մատնիչութեան տրխուր համբաւին:

ՎԱՐԴԱՆ ճիշդ հակապատկերն էր Վասակի: Հաւատքին մէջ անկեղծ եւ ջերմեռանդ, ստույթեան եւ պատրանքի թշնամի, սիրող՝ ուղղակի եւ առնական քաղաքականութեան, աներկեւան տեսլապաշտ մը՝ եւ ատպետական ոգւով տոգորուած՝ անիկա գործեց՝ հայ եկեղեցա-

կանութեան եւ ազնուականութեան շտապոյն
տարրին հետ եւ զոհեց ինքզինքն ու իրենները
աչ թէ իր փառքին կամ շահին համար՝ այլ
«ի վերայ ազգին եւ եկեղեցւոյ» : Իրեն նման-
ներունն է սխտիւր և վերջնական յաղթանակը :

ՎԵՐՋ



**UNIVERSITY OF CALIFORNIA LIBRARY
Los Angeles**

This book is DUE on the last date stamped below.

REC'D LD-URL
ORION JAN 19 '90
LD/URI

FEB 02 1990

REC'D LD-URL

MAY 17 1990

REC'D LD-URL
QL APR 15 1991
APR 14 1991

University of California, Los Angeles



L 005 837 458 8

UC SOUTHERN REGIONAL LIB



AA 000 828 6

